Ենթակա է հրապարակման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հուլիսի 10-12-ը Բաթումի (Վրաստան) գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանունը՝

Ավագ Ավանեսյան

Տիգրան Գաբրիելյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բաթումի (Վրաստան)՝ 2019թ. հուլիսի 10-12-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրոպական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն «Տասը տարի Պրահայից հետո» Եվրոպական Միության Արևելյան գործընկերության (ԱլԳ) առաջին ներդրումային համաժողովին

6. Քննարկված թեմաները՝

Համաժողովի ընթացքում քննարկվել են՝

- «Արևելյան գործընկերության շրջանակներում ներդրումների հնարավորություններ և մարտահրավերներ. 10 տարի Պրահայից հետո»,
- Տնտեսական ինտեգրման տեսանկյունից Արևելյան գործընկերության երկրների հիմնական ձեռքբերումները, տնտեսական ինտեգրման

գործընթացում ներդրումային միջավայրի բարելավումը և ներդրումային հնարավորությունների մասին իրազեկության բարձրացումը,

- Արևելյան գործընկերության երկրներում ենթակառուցվածքների, էներգետիկայի, գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում վերջին միտումները, առաջնայնությունները և ներդրումային ծրագրերը,
- Արևելյան գործընկերության երկրներին Եվրամիության կողմից տրամադրվող ծրագրերը և ֆինանսական գործիքները, ԵՄ արտաքին ներդրումային պլանը որպես ներդրումների ներգրավման և խրախուսման գործիք,
- Արևելյան գործընկերության երկրների միջև առևտրի և տնտեսական ինտեգրմանն ուղղված հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

«Տասը տարի Պրահայից հետո» Եվրոպական Միության Արևելյան գործընկերության առաջին ներդրումային համաժողովը կազմակերպվել էր Եվրոպական հանձնաժողովի և Վրաստանի կառավարության կողմից և նվիրված էր Արևելյան գործընկերության տասնամյակին: Համաժողովին մասնակցում էին Արևելյան գործընկերության անդամ երկրների կառավարությունների և գործարար համայնքների ներկայացուցիչներ, ինչպես նաև ԵՄ խորհրդի, Եվրոպական հանձնաժողովի, ԵՄ անդամ երկրների և միջազգային կառույցների բարձրաստիճան պաշտոնյաներ: Հայաստանի պատվիրակության կազմում էին ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալներ Ավագ Ավանեսյանը և Տիգրան Գաբրիելյանը, պետական կառավարման մարմինների, ինչպես նաև գործարար համայնքի ներկայացուցիչներ:

Ներդրումային համաժողովի նպատակն էր ստեղծել արդյունավետ հարթակ Արևելյան գործընկերության երկրների և Եվրամիության գործարար շրջանակների և կառավարությունների միջև համագործակցության համար, խթանել ներդրումային ծրագրերը՝ հատկապես ենթակառուցվածքների, էներգետիկայի, գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում:

Ներդրումային համաժողովի ժամանակ քննարկվեցին Արևելյան գործընկերության տասնամյա գործունեության ընթացքում ԱլԳ 6 երկրների ներդրումային և գործարար ոլորտներում հիմնական ձեռքբերումները և վերջին զարգացումները, ԵՄ աջակցությունը ենթակառուցվածքների (ներառյալ՝ տուրիզմ), էներգետիկայի, արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում և այդ ոլորտներում իրականացվող ներդրումային ծրագրերը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալները ելույթներով հանդես եկան ներդրումային համաժողովի բացմանը և համապատասխան պանելների ընթացքում, ինչպես նաև կառավարություն-բիզնես և բիզնես-բիզնես ֆորմատով քննարկումներին և ներկայացրեցին Հայաստանում առկա ներդրումային հնարավորությունները և ներդրումային ծրագրերը:

«Արևելյան գործընկերության շրջանակներում ներդրումների հնարավորություններ և մարտահրավերներ 10 տարի Պրահայից հետո» խորագիրը կրող պանելային քննարկման ժամանակ իր ելույթում ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանը նշել է, որ Հայաստանի բարեկեցությունը և զարգացումը որոշակիորեն պայմանավորված են հարևան երկրների բարեկեցությամբ և զարգացմամբ, և որ Հայաստանն իր տնտեսական զարգացումը տեսնում է նաև որպես գլոբալ շուկաներում մրցունակ նորարարական, ինժեներական ու տեխնոլոգիական լուծումներ առաջարկող և արտահանող երկիր, ինչի լավագույն օրինակներ են ԹՈՒՄՈ-ն և Արմաթ-ը: ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալը հավելել է, նաև որ Հայաստանում գործում են 250-ից ավելի «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ, որտեղ ավելի քան 6500 երեխա ստանում է անվճար ինժեներական կրթություն: Նախարարի տեղակալն անդրադարձել է նաև «Հայաստանում ԵՄ-ն նորարարության համար» ծրագրին, որով նախատեսված է ԹՈՒՄՈ-ի հետ համագործակցությամբ աջակցել «ԵՄ-ն նորարարության համար. ԹՈՒՄՈ կենտրոն»-ի ստեղծմանը, որը հարթակ կտրամադրի տեխնոլոգիաների, ճարտարագիտության, մաթեմատիկայի և գիտական այլ ոլորտների ուսանողներին՝ իրենց մասնագիտական ոլորտի վերաբերյալ գործնական փորձառություն ձեռք բերելու համար:

Համաժողովի մասնակիցները կարևորել են ԹՈՒՄՈ-ի ուղղությամբ իրականացվող աշխատանքները և նշել, որ այն կարող է լավագույն փորձի օրինակ դառնալ Արևելյան գործընկերության անդամ երկրների համար:

Ներկայացվել են նաև ԵՄ կողմից Հայաստանում իրականացվող աջակցության ծրագրերը, որոնք իրենց ազդեցությունն ունեն երկրի տնտեսական զարգացման, շուկաների մատչելիության մեծացման, ներդրումային և գործարար միջավայրի բարելավման, ինչպես նաև ՓՄՁ-ների զարգացման վրա: Կարևորվել է նաև Արևելյան գործընկերության անդամ երկրների միջև համագործակցության խորացումը և առևտրատնտեսական կապերի ընդլայնումը, ինչը կնպաստի թե՛ երկրների ներդրումային միջավայրի բարելավմանը և ներդրումների ավելացմանը, և թե՛ տնտեսական ինտեգրմանը:

«Գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտ» թեմայով քննարկմանը ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանը ներկայացրել է երկրում գյուղատնտեսության ոլորտի զարգացման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացվող քայլերն ու պետական օժանդակության ծրագրերը: Անդրադառնալով Եվրամիության աջակցությամբ Հայաստանում իրականացված և ընթացիկ մի շարք ծրագրերին (ENPARD, TWINNING, TAIEX): Նախարարի տեղակալն ընդգծել է, որ ԵՄ-ն հանդիսանում է Հայաստանի ամենախոշոր դոնոր գործընկերը: Նախարարի տեղակալն անդրադարձել է նաև Հայաստանի ներդրումային դաշտի առանձնահատկություններին և արտահանման հնարավորություններին, մատնանշել ներդրումների համար առավել գրավիչ ոլորտները: Նա նաև մասնակիցների ուշադրությունն է հրավիրել այն փաստին, որ, ունենալով սահմանափակ ջրային ռեսուրսներ՝ Հայաստանում իրականացվում է

ձկնաբուծական արտադրանքի արտահանում, իսկ կլիմայական պայմանները բարենպաստ են որակյալ և բարձր համային հատկանիշներով օժտված մրգի ու բանջարեղենի արտադրության համար:

Այցի շրջանակներում նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանը հանդիպում է ունեցել նաև Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD) տարածաշրջանային տնօրենի հետ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալները մասնակցել են նաև 16-րդ Բաթումի միջազգային համաժողովի բացմանը, որին մասնակցել են նաև ԵՄ Խորհրդի նախագահ Դ. Տուսկը, Վրաստանի նախագահը, Վրաստանի վարչապետը, Արևելյան գործընկերության երկրների արտաքին գործերի նախարարությունների պաշտոնյաները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Միջոցառման ընթացքում ոչ մի փաստաթուղթ չի ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Ներդրումային համաժողովի վերջում Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչներն ԱլԳ երկրներին առաջարկեցին շարունակել ակտիվ մասնակցություն ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում ընթացող գործընթացներին, նախաձեռնություններին և ծրագրերին, որոնք նպատակաուղղված են առևտրատնտեսական համագործակցության ընդլայնմանը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Ավագ Ավանեսյան

Տիգրան Գաբրիելյան

16.07.2019թ.